# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ, Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան շնորհվեց ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանին:

Հանդիսությունը բացեց ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը՝ բարձր գնահատելով Ֆադեյ Սարգսյանի հայրենանվեր գործունեությունը:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: Հայրապետական կոնդակում մասնավորաբար ասվում է.

«Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու անյոգնաբեկ ջանքերը բազում բարի պտուղներ են տուել մեր ժողովրդի կեանքում: Ձեր անմիջական ղեկավարութեամբ ձեռք բերուած գիտատեխնիկական նուաճումները լայն կիրառութիւն են գտել տարբեր ասպարէզներում՝ ընդգրկելով արտադրութեան ու պաշտպանութեան, կառավարման ու գիտահետազօտական ոլորտներում: Վարելով վարչական պատասխանատու պաշտօններ եւ աւելի քան մէկ տասնամեակ ղեկավարելով Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը, Դուք մեծապէս նպաստել էք մեր երկրի տնտեսական առաջընթացին, յատկապէս՝ Հայաստանի արդիւնաբերութեան վերակառուցմանն ու հետեւողական զարգացմանը, կրթութեան ու մշակութային կեանքի զօրացմանը:

Մեծապէս ուրախ ենք, յարգարժան պրն Սարգսեան, որ այսօր, որպէս ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պրեզիդենտ, աննուազ նոյն եռանդով ու նախանձախնդրութեամբ եւ Ձեր հարուստ փորձառութեամբ ծառայում էք հայրենի գիտական մտքի առաջընթացին: Ձեր նախագահութեամբ Ազգային Ակադեմիան յաջողութեամբ շարունակում է իր շնորհակալ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ բարձր պահելով հայ գիտութեան վարկն ու համարումը» (տե՛ս «Էջմիածին», Է, էջ 7):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, ի գնահատություն տիար Ֆ. Սարգսյանի՝ Հայրենիքին ու ժողովրդին մատուցած ծառայությունների ու վաստակի, Հայոց Հայրապետը ՀՀ ԳԱԱ նախագահին պարգևատրեց «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն այդ բարձր պատվի համար, Ֆադեյ Սարգսյանն իր խոսքում նշեց. «Մեր Եկեղեցին ամբողջ պատմության ընթացքում հովանա-



ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

վորն է եղել մեր գիտության, կրթության ու մշակույթի: Եվ այսօր ամեն մեր ունեցածով մենք պարտական ենք Հայ Առաքելական Ս. Եկեղեցուն»:

Այնուհետև իր օրհնության խոսքն ասաց Հայոց Հայրապետը: «Հավանաբար, երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետն ինքը պիտի ցանկանար շնորհել այս շքանշանը մեծարգո փիար Փաղեյ Սարգսյանին՝ մեր ժողովրդին ու Եկեղեցուն իր բերած ծառայության դիմաց: Փառք և գոհություն եմ մատուցում, որովհետև առիթն ունեմ Վազգեն Ա Հայրապետի օրհնությունն էլ իմ հոգու ջերմ զգացումներին շաղախած իրականացնել այս պարգևի տվչությունը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով ակադ. Փադեյ Սարգսյանին ծննդյան 80-րդ տարեդարձի առիթով և հղելով իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար տիկ. Թամարա Պողոսյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, ՀՀ ԳԱԱ անդամներ, գիտության ու մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության գեղարվեստական մասում բարձրարվեստ կատարումներով հանդես եկավ Հայաստանի կամերային նվագախումբը՝ ղեկավարությամբ Արամ Ղարաբեկյանի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*